


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 8 ՄԶՃ.
Գաւառաց 10 ՄԶՃ.
Վեցամսեյ Կ. Պոլսոյ 4 ՄԶՃ.
Գաւառաց 5 ՄԶՃ.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :



ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց ճանրու-
ծ ախար խմբագրութեան վրայ է :
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն խմբագիր
— Տնօրէնին պիտի ուղղուի : Չալա-
թի Ստանբուլի Դատարանի թիւ
138 : Նոյն օրինակ : Մատիթ գրասեն-
եակը :
Ճանրուծ ախար չվճարուած նա-
մակ չընդունուի :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 27 ՕԳՈՍՏՈՍ

Ա. Զ. Գ.

Լրագրոյս Մեծ. բաժանորդներէն
կը խնդրենք որ մեր անդորրագիրն
իրենց ներկայացած ժամանակ բա-
ժանորդագիրն վճարելու բարեհաճին,
խորհելով որ մեր սպաւորական ամեն
ծախքերը կանխիկ կը վճարուին :

Նոյն խնդիրը կուղղենք նաեւ մեր
գաւառաւորնակ բաժանորդներէն ա-
նոնց, որոց բաժանորդագրութեան
տարեգումն ամիսներ անցած է և
դեռ չեն վճարած :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Մէհմետ Ալի փաշան նոր յաղթու-
թիւն մ'ալ տարաւ Ռուսաց վրայ և
զանոնք լ'օմ գետէն անդին միեց : Քա-
նի մ'օրէ 'ի վեր լ'օֆշայի կողմը պա-
տերազմի լուրեր կը լսուին բայց վախ-
ճանը դեռ յայտնի չէ : քանզի տա-
կաւին պաշտօնական հեռագիր չ'ը-
րատարակեցաւ : Սիւլէյման փաշա
իւր վերջին պատերազմներէն 'ի վեր
Շիրակայի վրայ նորէն յարձակում մը
չըրուա : միայն Ռուսաց դիրքերը կը
ռմբակոծէ և կ'ապրօվայի հետ անոնց
հաղորդակցութիւնը կարելի կը ջանայ :
Շիրակայի կրճին մէջ Ռուսաց ռազմա-
միջոցներն Օսմանեան ռուսներէն կը-
րակ առնելով բռնկեր և բաւական
կորուստ տուեր է : Պատերազմի աս-
պարէզին ուրիշ կողմերէն ալ կարեւոր
լուրեր չկան : Ասիոյ կողմը, Մուս-
թաֆա փաշային կէտիկէրի մեծ յաղ-
թութենէն 'ի վեր Ռուսը դարձեալ
անշարժ կը մնան : իրենց օգնութիւն
առնելէ ետեւ Եսհնիկէրի Օսմանեան
գիրքերուն վրայ ըրած յարձակումը
պարտութեամբ վերջացած էր : Եւ-
սոյ Մուսթաֆա փաշա յարձակողա-
նի սկսելով յաղթեց, և կէտիկէրէն
և Գըրըլ-թէփէնէն վանեց զանոնք :
Հիմա Ռուսը բոլորովին սահմանադը-
լուիւր քաշուած կ'երեւին, Արտաշա-
նը միայն պահելով :

Բեդրասուրէն կը գրեն թէ իւր-
թիկայի պարտութեան արատը մար-
բերու համար մեծ պատրաստութիւն
կը տեսնուի : Ասոր համար Ռուսը
նորէն մեծ ճակատամարտ մը մղելու
գիտաւորութիւն ունէին : Իսկ պա-
տերազմական գործողութեանց վրայ
Բեդրասուրէնի մէջ ձեռնհաս անձանց
կարծիքն այս է որ Ասիական թուր-
քիս պատերազմի գլխաւոր ասպարէզ
պիտի չըլլար : Կովկասի բանակը մի-
այն պաշտպանողական գիրք պիտի
բռնէր : Բայց պարագաները զայն
խրախուսեցին, յուսացուածէն աւելի
դործելու : Օսմանեան զօրաց անշար-

ժութիւնն և Արտաշանի գլխաւոր գը-
րաւումը Ռուս զօրավարաց կարծել
տուաւ թէ կրնան արագապէս յա-
ռաջ քայլել : Ռուսի առանց մտածե-
լու թէ իրենց զօրաց թիւը բաւական
չէր, յառաջացան, երեւակայելով թէ
թուրքաց դէմ ռազմագիտական ա-
մեն յանցանք ներելի էր : Բայց Ձէ-
վինի մէջ իրենց սխալը տեսան, և
պէտք է գոհ ըլլան որ իրենց անխո-
հեմութիւնն աւելի մեծ պատիժ մը
չկրէր : իրենց ձախ թիւը մանաւանդ
վերջին աստիճան վտանգի մէջ էր և
Տէր Դուկասով զօրավարին տաղան-
դովը միայն կրցաւ ազատիլ, քանզի
այս զօրավարը խիստ ճարպիկ կերպիւ-
յետս նահանջեցաւ : Եւրոպական
թուրքիոյ մէջ պատերազմն աւելի խո-
հեմութեամբ սկսած էր : սպայակոյ-
տի գլուխ Նէբօքօնքըրի զօրավարը խո-
հական ռազմագէտ մը համարուած
է և Ասիոյ մէջ եղածին պէս կամովին
յանդուգն ձեռնարկներու չէր սկը-
սեր : Բայց գործողութեանց անօրէ-
նութիւնն իւր ձեռքը չմնաց, բարձ-
րագոյն կարգի սպայից մէջ մարդիկ
կային, որք աւելի յանդուգն ձեռ-
ներէցութիւն մ'ունէին քան թէ ռազ-
մագիտական խոհեմութիւն, և կ'ը-
րեւակայէին թէ յանդուգնութեամբ ա-
մենայն ինչ կարելի էր :

Ասոնք էին որ Մեծ-գուքն հա-
մոզեցին թէ պէտք էր արագապէս
Կ. Պոլսոյ վրայ քայլել : Մանաւանդ
երկտասարդ զօրավար մը, որ մեծ
գուքնին խիստ սիրելի էր և Նէբօ-
քօնքըրի զօրավարին հակառակորդ,
յառաջ քայլելու յատակադէմին գլխա-
ւոր պաշտպան կանգնեցաւ : Ռուսաց
գլխաւորութեամբ Գանուբն անցնիլն ա-
րագապէս յառաջանալու կարծեաց
խիստ նպաստաւոր կերեւէր : Ռուսի
Մեծ-գուքն աւելի այս կարծեաց
ազդեցութեան ներքեւ ինկաւ : դեռ
բազմաթիւ զօրք անցած չէր Գանու-
բէն, ինք դէպ 'ի թրնովա քալեց և
Կուքքօ զօրավարն ալ Պալքաններէն
անդին զրկեց : Ասիոյ կողմը Ռուսաց
կրած ձախորդութիւնները խրատ
պէտք էր ըլլային, բայց ամենեւին ու-
շագրութիւն չեղաւ անոնց : Երեւա-
կայութիւնները բորբոքած ըլլալով
այս երկու վիճակին մէջ նմանութիւն
չտեսան : Արդէն Կ. Պոլսին և Ս. Սո-
փիայի դմբեթիւն իրենց աչքին առջև
կը բերէին : Այն միջոցին էր որ սպա-
յակոյտի գլխոյն խոհական յատակա-
գիծերն անարգութեան և Բլեմիայի
առաջին ձախորդութեան լուրը բա-
նակալեցին հասաւ : Մեծ-գուքն
այս դէպքէն զայրանալով, որ ընդ-
հանուր յաջողութեանց մէջ բայցա-
ռութիւն կը համարուէր, հրաման
տուաւ որ օգնութիւններ հասնին և
նորէն Բլեմիայի վրայ յարձակում ըլ-
լայ : Նոյն միջոցին Գրուսնէի զօրա-
վարն հետադադարութիւն մ'ըրած և
տեսած էր որ իւր ունեցած զօրքով

յիմարութիւն էր Օսման փաշայի մեծ
զօրութեամբ բռնած ամրութեանց
վրայ յարձակիլ : Գրուսնէի իւր այս
կարծիքն հաղորդեց Մեծ-գուքնին,
բայց նա ստիպողաբար հրամայեց ի-
րեն որ անպատճառ Բլեմիայի վրայ
յարձակի : Այս հրամանը կատարե-
ցաւ և Ռուսաց զօրքը մեծ հարուած
կրեց : Շաքսօքոյի զօրավարին հրա-
մանաց ներքեւ գտնուող զօրքն ա-
ւելի կոտորեցաւ, քանզի Մեծ-գուք-
նին հրամանն աւելի մեքենական կեր-
պիւ գործադրած և յարձակումը
խիստ յառաջ տարած էր : Բայց և
այնպէս Գրուսնէի պաշտօնական եղաւ,
թիւրքա յարձակման մէջ դանդաղու-
թիւն ըրած ըլլալու ամբաստանու-
թեամբ : Այս Ռուսիոյ մէջ ձեռքն
հաս անձանց կարծիքն այս է, և հի-
մա ձախորդութիւնները գարմանելու
համար բազումնոր զօրք զրկել հարկ
եղած է : Կայսերական պահապան
զօրքը սեպտեմբերի սկիզբը պիտի
հասնէր, և կերեւի որ Ռուսը բաւա-
կան օգնութիւն ստացած էր, բայց
տակաւին իրենց պատրաստութիւն
ները լրացած չըլլալով, Օսմանեան
զօրավարը կանխեցին յարձակողա-
նի սկսան, և չարունակ յաջողութիւն
ձեռք կը բերեն :

Ռուսը տակաւին իրենց փոքր
դաշնակիցներն ալ կազմակերպած
չեն : Ռուսիայի հետ դեռ կատար-
եալ համաձայնութիւն կամ դաշնակ-
ցութիւն հաստատուած ըլլալ յայտ-
նի չէ : Կրտսի մանաւառաւոր թէ ան-
համաձայնութիւնը կան երկու կող-
ման մէջ : Կարողա իշխանն յանձն չառ-
նուր իրեւ Ռուսիոյ արբանեակ գոր-
ծածուիլ, այլ անկախ օժանդակ և
դաշնակից կենալ կու գէ : Սերվիլի
միջոց կը վարանին պատերազմի մաս-
նակցելու, քանզի ոչ զինուորական
կազմաւորեալ զօրութիւն, ոչ ալ
գրամ ունին : Թէեւ իրեւ նպատա
Ռուսիայէն քիչ մ'ստակ առած կը-
րեւին, սակայն ներկայ պատերազմաց
մէջ բաւական չկրնար ըլլալ : Բայց
ասկէ՞ Աւստրո-Հունգարիա արդեւ
կըլլայ Սերվիլի շարժմանց, և կըս-
պառնայ զօրք գրաւել երկիրն՝ եթէ
Սերվիլի հաջողութիւնը չյարգէ : Ար-
դարեւ Եւրոպական մեծ տէրութեանց
համար պատուոյ խնդիր մ'է Սերվիլի
յանդուգնութիւնը զսպել : քանզի Բ-
Դուռն անցեալ տարի իրենց միջնորդ
գութեան զինանքով Սերվիլի արժա-
նաւոր պատիժը չտուաւ, և իւր յաղ-
թական զօրքն ետ քաշեց : Բունաս-
տան ալ չուզեր իւր ասպաւայն և էդու-
թիւնը վտանգի ենթարկել : ասկէց
զատ՝ Սերվիլի ամրութեան ուրուա-
կանէն կը վախայ : Այսպէս Ռուսիա
ներկայ պատերազմին մէջ անհազին
գիտարութեանց հետ մրցելով, իւր
ոյժը կ'սպառէ : Վերջին հեռագիր մը
կը ծանուցանէ թէ վիսպառութեան
սովորները չպիտի կրնայ վճարել :

Ըսել է թէ այժմէն անանկութիւնն ալ
Ռուսիոյ դուռը բաղնիլ սկսած է :

Բուլեղի պատերազմին ասպարէ-
զէն եկած մասնաւոր տեղեկութիւնը
կը ծանուցանեն թէ կրակի օրը Ռու-
սական ստուար զօրաբանակ մը՝ զոր
40000 մարդու կը հասցնեն, լ'օֆշա-
յի վրայ յարձակել է, ուր ութ վաշտ
Օսմանեան զօրք միայն կային : Սյա-
տիկ կուռէ մ'ետեւ, որոյ մէջ Ռու-
սերը չատ մարդ կորուսեր են, Օս-
մանեան զօրքը տեսնելով որ չպիտի
կրնայ այլ ևս գիմարել այնչափ մեծ
զօրութեան, քաղաքին խաւամբ բռնա-
կիչներն ալ հետն առնելով ետ քաշ-
ւեր է :

Սակայն Օսման փաշան այս լուրն
առնելուն պէս, 28 վաշտ զօրք Բլեմ-
նայէն լ'օֆշա գիմար է՝ քաղաքը
Ռուսաց ձեռքէն ետ առնելու գիտ-
մամբ, և չորեքշաբթի օրը հոն հաս-
նելով հետեւեալ օրը մեծ պատերազմ
մ'սկսեր է, որուն արդիւնքը մինչև
երէկ իրիկուն իմացուած չէր :

Շքօտրայէն օգոստոս 23 թուով
հեռագիր մը կը ծանուցանէ թէ Գա-
րատաղիք երկու թիւի բաժնուելով՝
Նիքիտի վրայ յարձակեցին, բայց չըր-
ջակաները գտնուած խոտի դէպքերուն
բռնկեցին ծաւալեալ թանձր մուտէ
մը պաշարուելով, ճանրանին կորու-
սեր, և երկու թիւերն իրարու պա-
տահելով՝ մէկմէկ թշնամի կարծե-
ր կատարել կուռ մ'ըրեր և զիրար ան-
խնայ շարժեցին :

Նոյն միջոցին Նիքիտի պահապան
զօրքն ալ դուրս յարձակելով՝ Գարա-
տաղից չիթութիւնն աւելի մեծ-
ցուցեր և սաստիկ շարժ մ'ալ անոնք
տուեր են, այնպէս որ Գարատաղիք
4300 մեռեալ թողլով՝ մէկ ժամու
չափ հեռաւորութիւն ունեցող լեռ-
ները վախեր են :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիլնիս 4 սեպտ.

Այս պաշտօնական թերթերն համա-
ձայնութեամբ կըսեն թէ Ռուսիա կարող
չէ իւր յանձն առած պաշտօն յաջող
վախճանի մը հասցնել : և կաւելցեն թէ
յիշեալ տեղութիւնն իւր գարաւոր անհո-
ղութեամբ և Եւրոպական ազդեցութեանց
տանց տեղի տալով գործած սխալները
կը քաշէ հիմա :

Բեդրասուրէի 4 սեպտ.

Պրիստուպեան կարծանքը չպիտի վը-
ճարուին :

Ֆրոթիսթի 4 սեպտ.

Ինիսթիթի զօրավարն հրաժարական
տուաւ :

Վիլնիս 6 սեպտ.

Երեսօրեանական ժողովը որոշեց ցա-
ւակցութեան ուղերձ մը զրկել Տիկին Թի-
չիի :

Փարիզ 6 սեպտ.

Պէլիքոր քաղաքէն պատգամաւորութիւն

մը պատկ մը մատուց Տիկին Թիէրի :
Կառավարութիւնն որոշելէ ետեւ որ Պ. Թիէրի յազարկու որով թիւնը պետութեան ծախքով կատարի, իւր որոշումն ետ առաւ, վասն զի Տիկին Թիէրի պայման առաջարկեց որ արարողութեան ձեւն ու պարագաներն ինք որոշէ : Փաբլիկ պահապան զօրքէն 20000 մարդ ուղեկից պիտի ըլլան դադարին :
Զրոյց կը պարտի թէ Պ. Կրէյլի հանրապետական կուսակցութեան գլուխ պիտի ճանչուի :

Լոնտոն 6 սեպտ.
Բաղմամբիւ հանդանակութիւնը բացւած են ի նպատակ Օսմանեան վերադարձը :
Պաբլիկ 6 սեպտ.
Լրագիրը կը ծանուցանեն թէ Կարու լա իրանը պահանջէր է որ Ռուսիոյ զօրքն ու ազգը նախատող Ռուս դորախարըն ատախանապետի ըլլայ :
Վիէննա 6 սեպտ.
Տալլէ Յայթիւնի լրագիրը կը ծանուցանէ թէ Ռուսաց հրամանատարութեան կեդրոնն երէկ զիւր Ռէպուբլիկայի կողմէ փոխադրուեց :
Լոնտոն 7 սեպտ.

Կեսպանական միջամտութիւն մ'ըլլալու ժամանակը հասած ըլլալուն վրայ Անգլիոյ հասարակութեան ըրած ցոյցերուն առթիւ, Լիւքսեմբուրգի մէջ Լորտ Տէրպիլի ըրած մէկ յայտարարութիւնը մեծ դժուրեւամբ ընդունուեցաւ :
Լորտ Տէրպիլ յայտարարեց թէ պատերազմողաց մէջ խաղաղութեան համար միջնորդութիւն մ'ընելու յարմար առթիւ չէ այժմ : Աւելցուց նաեւ թէ երբ Թաւուհայն կառավարութիւնն իմանայ թէ միջամտութեան ժամը հասած է և թէ իւր միջնորդութիւնն ընդունելի պիտի ըլլայ, իսկոյն օգուտ պիտի քաղէ այդ պարագայէն :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Կըսուի թէ Բուսանիոյ զօրքերը Վիտինի մօտ Դանուբն անցնելով դէպ ի բէջիւս կը քարեն, և արդէն Օսմանեան զօրաց հետ կուրի բռնուեր են :

Ռուսաց Ասիական բանակին ալ շարունակ նոր օգնութիւններ կը հասնին : Օգոստ. 26ին 12060 զօրք և 48 թնդանօթ հասեր են Տէր Ղուկասօֆի բանակն Երևանայ մօտ :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուլթանն երէկ միջօրեի աղօթքէն ետեւ թօփհաձէ գնաց, ուր Մեծ-Եպարքոսն և այլ նախարարք գումարուելով քանի մը ժամ խորհուրդ ըրին ընդ նախագահութեամբ Ն. Կ. Վեհափառութեան :

Հինգշաբթի օրը Բուսանիոյ երկաթուղին դարձեալ 56 1/2 վրաւոր բերաւ, որք Սիւրբէճիին հրապարակին վրայ արդէն պատրաստեալ կուրքերը գործելով մայրաքաղաքին այլ և այլ հիւանդանոցները զրկուեցան :

Վեհ. Սուլթանն հեռագրով գահութիւն յայտնեց Մէհմէտ Ալի փաշային՝ Լոմ գետին եզերքը տարած փառաւոր յաղթութեան վրայ, որոյ մէջ Ռուսք 3000 մեռեալ ու վիրաւոր ունեցեր են. իսկ Օսմանեան զօրքն 200 մեռեալ և 700 վիրաւոր միայն ունեցեր է :

Հինգշաբթի օրն երեք վաղտ Միւսթէհֆօղ զօրք երկաթուղիով Ալաբանուպօլիս զրկուեցան :

Մայրաքաղաքին թուրք լրագիրք կը ծանուցանեն թէ Գըզանիդէի գայմազամ Աքիֆ Էֆենտին, զոր Ռուսք գերի բռնելով կապրովա տարած էին, յիշեալ քաղաքը հասած ժա.

մանակ առանց պատճառի սպաննուեր է :

Հիւլենական լրագրերէն տանն. մէկ թերթ թուրքից գէմ թնամական և Գրգու յօդուածներ հրատարակելուն պատճառաւ, Բ. Դրան հրամանով թուրքից հոգը մանկէ արդիւնեցան :

Պէպէք մեծ տան մը պահպանութիւն ընող Մանուէլ անուն Սերաստայի Հայ մը հինգշաբթի օրն իւր փողը գանակով կտրելու փորձ փորձեց, բայց բարեբաղդաբար վերքը շատ խոր չերթալով չմեռաւ, և շուտով պէպք եղած նախնական դարմանը տարուելով հիւանդանոց փոխադրեցաւ :

Այս յուսահատական դժուրին պատճառը գրամական կորուստ մ'է եղեր :

Մայրաքաղաքին հեռագրատան պաշտօնէաներէն Ալիզ Էֆենտի անուն թուրք մը չորեքշաբթի օրն իւր մէկ բարեկամէն հրաբուրելով Աքսարայի կողմը գլինետան մը մէջ սպաննուեցաւ : Ոճրագործը բռնուած է :

Հինգշաբթի օրն արքունի նաւարանի շոգենաւներէն մին Սայը Պազարի առջեւ չէքտիրմէ մ'ընկղմեց, որոյ մէջի մարդիկը բարեբաղդաբար ազատեցան :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԵՍՆԱՄԱՐ ՈՒՄՈՒՄԻՆ	
26 օգոստ. ուրբաթ իրիկուն	40,14
Բուսանի երկաթուղի	Քր. 28 25
Թղթադրամ	Վր. 179 3/4

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Կ. Պօլիս 26 Օգոստոս	
Սուրբ Եփէմի Բաթ. Անգղ. Վր. 3, 5	
Փոխանակութեան	1,25
Կ. Պօլիս Պանքային	2,28
Քրէտի Եփէմի	2,
Քրէտի Օսթրո-Թուրք	—
Փոլս. 1863	Ֆր. 53
» 1865	» 53
» 1869	» 49 20
» 1872	» 47
» 1873	» 48
Թրամուայ	Օսմ. Վր. 1 7

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

26 Օգոստոս	
Անգղ. Վր. 409 30	
Նարոնի տիկ	» 87 30
Իմիւնալ Ռուս	» 48 30
Գըրմից	» 54 7
Հինգ փրանք	» —
Հինգ նոյ	» 117 20
Պղինձ	» 462

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

Երէկ ազգային վարչութեան կըրօնական և ֆաղաքական ժողովները գումարուելով խառն ժողով կազմեցին ընդ նախագահութեամբ Ա. մեն. Ս. Պատրիարք հօր ինչ ինչ խնդրոց կարգադրութեան համար :

Սոյն նստին մէջ Պատրիարքական փոխանորդ Գեր. Տ. Յ. Միկրեան հետեւեալ բողոքը մատուց :
Առ պատկառելի ատեն Ազգ. Վարչութեան Կրօն. և Փաղ. Խառն ժողովը :

Անցեալ չորթու, օգոստ. 19, ուրբաթ առաւ Ազգ. ժողովը մէջ երեսփոխաններէն Փափագեան Ստեփան Էֆենտին ինչ գէմ ըրած յարձակումն զիտը արդէն : Այն անկրօն և անփայլ յարձակումն Ազգ. ժողովը մը արժանապատուութեան և նոյն իսկ ընդհանուր ազգին համեմատութեան գէմ ըլլալով թէպէտ նոյն ժո.

ղովը մէջ բողոքելու պատրաստ եմ, սաւայն Փափագեան Ս. Էֆենտին որովհետեւ սա խօսքն ալ արատասանեց թէ «Պատրիարքարանը պաշտօնէն է, և Վէրիլը կապառակու է, և թէ վայն այն Հայուն» որ փոխանորդարանի հետ դժուր ունի և անտէր է, և թէ այնպիսի յայտնութիւն «նեք պիտի ընեմ փոխանորդարանի գէմ, որ սոսկում պիտի պատճառէ» և այլն, այս խօսքերը կըսեմ, ուղղակի Ազգ. վարչութեան ուղղութեանն արժանի ըլլալով, նախապէս պատկառելի Խառն ժողովը պաշտել կը բողոքեմ :

Վասն զի դուք, Տեառք իմ, ազգին վարչական ժողովն էք և դժուր ունիք միշտ Պատրիարքարանին հետ, Ս. Պատրիարքին և անոր փոխանորդին հետ. եթէ Պատրիարքարանը պաշտօնէն եղած է, դուք ևս անոր մէջն էք. եթէ Պատրիարքարանն փոխանորդը կապառակու է, Ազգ. վարչութիւնը նորա կոմսիկը, և նոյն իսկ Ա. մեն. Ս. Պատրիարք հայրը համալիտ եղած կըլլայ՝ աչք դոյնելով Վէրիլին այն ամեն սոսկալի գործոց, զորս Փափագեան Ս. Էֆենտին ազգասիրաբար կը յայտնէ :

Արդ՝ կը հրաւիրեմ զպատկառելի ժողովը՝ պահանջել Ազգ. Պատրիարքարանի պատիւը պաշտօնէն անարգ անունին գէմ : Պահանջել Պատր. փոխանորդութեան պատիւն, որ նոյն իսկ ազգին և տէրութեան համարունն իրաւամբ դրուող Ս. Պատրիարքին պատիւն է :

Զայտակի նախապէս պատկառելի ժողովը հետ մէկտեղ պահանջելով՝ սաւայն տիկ բողոքմամբ կը պահանջեմ նաեւ իմ անձնական պատիւս, որ իմ արեան գինն է. եթէ Փափագեան Ս. Էֆենտին կարող է, թո՛ղ օրինաւոր ամբաստանադիր մատուցանէ իմ կաշտանկերութեանց և այլ սոսկալի գործոցս համար, և ես պատրաստ եմ հրապարակաւ դատուիլ :

Տեառք իմ.
Եթէ տարի շարունակ ամեն անձը պիտի խառնուի և խոճով սիրելի ազգիս ծառայելէ զինք՝ չեմ կրնար հանդուրժել որ այս օրինակ անուանարկութեամբ և աւանդութեամբ թողում իմ պաշտօնս, այլ ցետիկ շունչ բողոքելով, ընտելութեան և դատաստան կը պահանջեմ, չէ թէ միայն իմ իրաւունքս և արդարութիւնն յերեան ամէրու համար, այլ ազգը ազատելու համար այս սահմանադրական քօղի ներքեւ բռնակալութեան խաղաղի ըլլայէ, որոյ գործն եղած է միշտ Պատրիարքներ և ժողովներ տապալել, և հանդարտ ու խաղաղ ազգն երկպառակութեան և խռովութեան մէջ ալեկոծել :

Արդ՝ մինչև Ազգ. ժողովը գումարման օրը՝ սոյն բողոքագրոյս ամեն մէկ կէտերուն վրայ խորհել Ձեր խմատութեանը կը յանձնեմ :

Եւ որովս զի Ազգ. ժողովը մատուցանելը բողոքս թերեւս պատկառելի տուեալից յանձնարարած տուեալ զիրու թիւն ունենաք, այժմէն կը խնդրեմ որ Նոր Գարի խաղաղի Խօսաարեան Օգուսէն Էֆենտին Խառն ժողովը ատենոր կոչէք, որպէսզի այն ալ փոխանորդարանի վրայ իւր հրատարակած զայնակեցեցեց յօդուածներուն վրայ բացատրութիւն տայ, և ամեն բան յայտնալի թէ ո՛վ է որ Պատրիարքարանն օրինաց և բարոյականի ուղիղ ճանրէն խտրեցնելու համար ամեն ճիշդ և հարկ լըծալի իւր անձնական շահուն համար :

Մնամ ակնկալու արդարութեան և իրաւանց և պատրաստական ծառայ ազգիս
Ի 26 օգոստ. 1877 Պ. Փ.
Ի Կ. Պօլիս Յաջ. Փահ. Միքեան

ՌԱՅԱՅԷԼԵԱՆ ԵՒ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Մուրատեան վարժարանի պատմութիւնն ուշի ուշով կարգաւորէք, իրեւ պատմական երկ՝ մեծ թերութիւններ ունի այդ գործը, բայց մեծ արժէք ունի իրեւ հայելի բարուց Միսիթարեան միաբանութեան, իրեւ նկարագիր ազգային դժուրոյ վիճակի և մանաւանդ իրեւ միջոց Հայոց աղքատ մանկուոյն կապտուած

իրաւանց պաշտպանութեան : Այդ գործը Միսիթարեան միաբանութեան դատաւարութիւնն և իր բաղմամբիւ հեղինակին ջատագովութիւնն և միանգամայն դատաւարութիւնն է : Այդ պատմութիւնը հրատարակելով բաղմարդուն հեղինակը ջանացած է նախ ինքզինք արդարացնել ազգին ընդհանրութեանն առջեւ, երկրորդ ազգին կապտուած իրաւունքը պաշտպանել և ճանչցնել, թէ եւ բաւական ուշ, բայց առաջին հարկէն քան երկրէքս Մեքսիկա տարութիւն ունիք այդ գործին համառօտ բովանդակութիւնը ներկայացնել հասարակութեան, հասնողերէն քան փոքրամասնութեան, բայց առաջին կարեւոր կը համարենք քանի մը դիտողութիւն ընել Ռաֆայէլեան և Մուրատեան հրատարակող մասին :

Մեր մէջ այժմ հասարակաց կարծիքն այս է թէ ինքուր տակ եղածը միայն Մուրատեան վարժարանն է, և թէ Ռաֆայէլեան վարժարանը Միսիթարեան միաբանութեան անկապտակ սեփականութիւնն է : Բայց միթէ ամէն քանի մը տարի առաջ Մուրատեան վարժարանի մասին ալ նոյն կարծիքը չունէր Հայ հասարակութիւնը : Միսիթարեան միաբանութիւնն ու Հոռովմէական հայերն երկար տարիներ այնչափ ճիշդ թափած են այդ վարժարաններն իբրեւ իրենց սեփականութիւնը ճանչցնել մեղ, որ մենք ալ մեր պատկանական պարզամտութեամբ բողոքովն հաւատացած ենք թէ իւրօք այդպէս է : Յայտնի է որ աշխարհայն վրայ ամեն զիւրի բանն է Հայուն հասկընքնել թէ ինք իրաւունք չունի, և ընդհակառակն ամենէն շփուար բանն ալ է Հայուն հասկընքնել թէ ինք իրաւունք չունի : Թէ որ իրաւունք չունիւ վայրկեանի մը մէջ կրնաս հասկընքնել, իրաւունք չունիւ հանկընքնելու համար երբեմն տարիներ պէտք են : Այսպէս երկար տարիներէ ետք Հայերն սկսած են հասկընալ թէ իրենք ալ իրաւունք ունին Մուրատեան վարժարանին վրայ, բայց դեռ մտքերն են անդամ չանցնել թէ նոյն իրաւունքն ունին և Ռաֆայէլեան վարժարանին վրայ : Այս վարժարանի մասին Հ. Թեոդորեանի կարծիքն ալ ինչպէս Միսիթարեան միաբանութեան է. բայց տեսնենք թէ Ազգ. Հեղ. վարժ Ռաֆայէլի, այսինքն նոյն ինքն Ռաֆայէլեան վարժարանի հիմնադրին կարծիքն ինչ է : «Եւ . . . ասացեալ շահն դարձուցել ի գլուխ դրամայ գործատան միջոց վասն աղքատ մանկանց Հայոց . . . Եւ այս են իմ կամք, զի վերապատուելի Հ. Ն. Բուզայեան կարգեցի ուղղել և գործադիր գործոց գործատան դամեանայն ժամանակս կենաց իւրոց, և տացի նմա իշխանութիւն կարգելը զյոյնոք իւր, առնել և կատարել զատացեալ կարգադրութիւն իմ : » Բարեբար հիմնադրին խօսքերէն ու միայն կը հասկցուի թէ իր կամքն է Ա. աղքատ Հայ մանկանց համար գործող մը հիմնել Հ. Նիկողայոսի ձեռքով : Բ. գործողին տեսնել թիւնը Հ. Նիկողայոսին յանձնել : Գ. իրեն յօշորդը կարգելու իրաւունքն ալ Հ. Նիկողայոսին յանձնել :

Սակայն ամեն ոք զիտէ որ Ռաֆայէլեան վարժարանին հիմնադրը ամ օրէն ցարդ տնօր նպատակը ճշդելու ի գործ դրուած չէ : Միսիթարեան միաբանութեան վարժարանը իր նպատակին միայն ծառայեցուցած է. այսինքն գլխաւորապէս ուղղութեամբ Հայոց աղքատ ձրի ընդունած է, հերեւեպէտեպէն ընդունած համեմատաբար քիչ տղաքն ալ ուղղութեամբ ընելու պայ.

մանաւ ընդունած է: Թէպէտեւ աղա-
ճէք վարժ Ռաֆայելի Լուսաւորչա-
կան ԷԼԷՄԷ հաստատ չենք գիտեր,
բայց սա ստույգ է նախ որ այն ժա-
մանակ (1799ին) Հոսովմէական Հայե-
րը Լուսաւորչականներէն գետն չէին
բաժնուած, և երկրորդ թէ կրտա-
կադրին կամքն, ինչպէս վերը տե-
սանք, «ոչ ապագայ» Հայ աղքատ
տղոց» համար, և «ոչ հերքող» Հա-
յոց աղքատ աղջիկներու համար
դպրատուն հիմնել էր: Եթէ այդ ը-
լար իր կամքն, անշուշտ այնպէս որ
յայտնած կըլար իր կտակին մէջ: Մը-
խիթարեան մեաբանութիւնն ի սկզբ-
նանէ ցարդ կտակագրին կամայն
հակառակ վարուած է. ուստի Հա-
յոց աղջիկն իրենցն է համար պա-
հանջի միաբանութենէն, կամ մե-
րայնոյ տունի հասկնալի լեզուով խո-
սելով, Հայոց աղքատն է իրենց իրա-
ւունքը պաշտպանել ընդդէմ՝ Մխի-
թարեան միաբանութենէն:

Գանք հիմա Մարտտեան վար-
ժարանին:

Ս. Մարտտ տնտեսական աղքա-
տիւնն կտակը մէջ բերելու հարկ չը
կայ, արդէն ամեն ոք գիտէ որ նո-
րա կամքն է եղեր Հայոց աղքատ
և աղքատ մանկանց համար դպրա-
տուն հիմնել, «ըստ խորհրդոյ և միջ-
նորդութեան վնեակի հարց միտն-
ձանց»:

Մարտտեան վարժարանի խնդ-
րոյն մէջ Մխիթարեան միաբանու-
թեան ընթացքն ա՛լ տեսիլ գատու-
պարտելի է: Մարտտայ ժառանգնե-
րը կտակին վեցերորդ յօդուածին օ-
րինակ զրկելով՝ կը խնդրեն միաբա-
նութենէն պատգամաւոր մը զրկել
'ի Մարտտա դպրատան գործը կար-
գադրելու համար: Մխիթարեանութիւնն
երկու հոգի կը զրկէ Գրիգոր հրա-
հանգ տալով նոցա որ «Ա. Մարտտ-
եան վարժարանի մատակարարու-
թեան իշխանութիւնը Գրիգոր և Գրի-
գոր Մխիթարեան միաբանութեան ձեռ-
քըն ըլլայ, և Բ. թէ միաբանութիւնն
հրկտակի մատակարարութեան հաշիւ-
ը Գրիգոր կտակակատարաց»:

Այս գաղտնի հրահանգն երևան
կենէ, և կտակարարաց ու միաբա-
նութեան մէջ դժտութիւն կը ծագի.
կտակակատարները շարունակ կը բռ-
նաբնութեամբ Մխիթարեանութեան գաղտնի գիտ-
ման դէմ և կը պնդեն թէ «Մարտտ-
եան տունն ինքեան պահէ միշտ ըզ-
ծայրագոյն իրենցն յայն ամենայն որ
հայի ի դպրատունն և բոս ամենայն
բանի»: «Միաբանութիւնը Մարտտայ
Անգղիական տունին կը դիմէ «առ-
'ի ապահովել նախ զհրկտակ ուղարմու-
թեան աղքատաց աղջիկն ի գանձա-
տուն տէրութեան, և ապա իրաւա-
խոս լինել ընդ կտակակատարան և ի
գործ դնել զայն»: Վերջապէս գա-
տը թէ և Հ. Թէոփորեանն և Գրիգորեանն,
և տէրութեան ընդհանրական փաս-
տաւանք թէ և քանիցս կը պնդէ թէ
հրկտակի վաճառքն ալ պէտք է պահանջու-
նայ օրինի ժառանգներէն, բայց Հ.
Թէոփորեան վաշխի մտանք տուած
խնդրագիրն յետ կը կոչէ, և մատ-
նաւոր պայմանագրով իրաւախոս կըլ-
լայ ժառանգաց հետ՝ աղջիկն աղ-
քատ մանկունքն երկու միլիոնի չափ
Ֆրանքէ գրկելով և զայն առատա-
ձեռնութեամբ Սամուէլ Մարտտայ
ժառանգաց նուիրելով:

Հ. Թէոփորեան լաւ հասկնող էր
որ թէ ժառանգները Մարտտայ տ-
ունին վճարէ դէմ բողոքեն, հրկտ-
ակը Մխիթարեան միաբանութեան
ձեռք չպիտի անցնէր, այլ միայն տ-
նոր գործադրութիւնն «ըստ խորհրդ-
ոյ և միջնորդութեան Մխիթարեան
միաբանութեան» պիտի ըլլայ. ուստի
իրաւախոս կըլլայ ժառանգաց հետ

և կտակեալ գումարը (երկու մի-
լիոն ֆրանքի չափ) ձեռք կը ձգէ:
Այսպէս այս դործին մէջ թէ՛ ժա-
ռանգը և թէ՛ Մխիթարեան միա-
բանութիւնը կտակագրին կամայն
հակառակ կըլլարուն և Հայոց աղ-
ջիկն որ և աղքատ մանկանց իրա-
ւունքն անտակոյն կընեն՝ իրաւա-
նոր իրեն ծանաւոր զահարանն ու
ձեռք հաճոյն վարձելով: Հ. Թէոփոր-
եան ամեն ճիշդ կը թափէ ընթերցո-
ղն համազօրութե՛ և թէ ինչ իրաւա-
խոս ըլլար, ժառանգները բոլոր-
վին իրենց պիտի անտականէին կը-
տակեալ գումարը. բայց նոյն իսկ ի
հաստատութիւնն այդ կարծիքին ի-
րեն մէջ բերած փաստերը ճիշդ տ-
նոր հակառակ կը հաստատեն: Մը-
խիթարեան Միաբանութիւնն իր ի-
րաւախոսութեան պայմանագրին օ-
րինակն արժէք և զօրութիւն չու-
նենալը լաւ գիտէ, այսինքն լաւ գի-
տէ օր թէ՛ Մարտտայ ժառանգներն
և թէ՛ Հայոց աղքատ միշտ իրաւունք
ունին իրմէ համար պահանջելու աղ-
հրատակի գործադրութեան և մա-
տակարարութեան մասին. իր այդ
ձանաչումն ու դիտակցութիւնն էր որ
ստիպեց զինք զՄարտտեան վարժա-
րան փառաւորէն ի փարիզ փոխադ-
րել, և անտի ի Հոսովմէ փոխադրելու
խորհուրդն յղանալ: Բայց պէտք է
գիտնալ Մխիթարեան Միաբանու-
թիւնը թէ՛ ո՛ր օր ալ փոխադրէ վար-
ժարանը, առ աղջիկն ունեցած պա-
տասխանատուութենէն չազատիր,
այլ զայն տեսիլ կը ծանրացնէ: Միա-
բանութիւնն ի սկզբնանէ անտի ցարդ-
տունն ճիշդ թափած է հաճախորդ-
ներէ Գրիգորեան, որով և կտակած տը-
ւած է վարժարանին մատակարարու-
թիւնը հաւատարմարար կտարե-
լուն վրայ: Առ այժմ այսչափ:

Հ. Ի.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՄԱԿԱՆՆԵՐ

Օրհնութիւն. — 1. Պիտիք. — 2. Աղբ. Ժո-
ղովք. — 3. Զեպ. — 4. Զառարկայ Կար-
ձեպ. և Լաւորք:

Ազնիւ Մարտա.

Կեդր. պիտիքն երկաթալեզան հա-
տուցի կողմը 94950 ըրէ Մուգաթալեզա-
նալեզան է:

Ես չպիտի խոսիմ յիշեալ գումարին
քանակութեանը վրայ, այլ պիտի խոսիմ
նոյն իսկ տուրքին դէմ:

Այս տուրքը զոր գումարները կը վճա-
րեն Կեդր. տնտեսիկն, գաւառացաց վրայ
գրեթէ ծանր բեռ մ'եղած է. վասն զի
չստանալ առաջնորդաց ձեռքը տնոր քա-
նի մը պատիւը կը հաւաքուի, և այս առ-
թիւ բողոքով տնտեսութիւնը և զեղծ-
մունք կը գործունէ: Յիշեալ հասոյթը
գանձելու համար Կեդր. վարչութիւնն ալ
կերպ կերպ միջոցներ խորհելով բազում
ժամանակ կը փնտռէ:

Եթէ այդ հասոյթը գաւառացացին
կրթութեանը ծառայելու յատկանայ,
պիտի ըսեմ որ քիչ մ'ալ աւելի վճարէ:
Ուստի Աղբ. ժողովը գեղեցիկ գործ
մ'ըրած կը լինի, եթէ արդ խնդրին հիմ-
նական կերպով լուծէ, և յիշեալ մու-
գաթան գաւառացաց կրթութեանն հա-
մար վարժարաններուն մը հաստատու-
թեան յատկանայ:

Առաքելի գումարը գաւառական
խնդիրները Կեդր. տնտեսիկն ծախսաց զը-
խաւոր պատճառ մ'են:

Կրնայ իրաւացի ըլլալ այդ տարիւ-
թիւնը. բայց Մուգաթալեզանով գաւա-
ռացաց վճարած տուրքին փոխարէնը
Պարսկ Հայ լեռնայն վրայ բաշխելով ի-
րարու վրայ մարդ զրախ տարին երկու
զրիկ չստի կիցնայ, զոր սիրով կը վճարէ
Պարսկին, եթէ Մուգաթալեզան տնտես գա-
ւառացաց տուրքը գաւառացացին կըր-
թութեանն յատկանայ, կրթութեանն,
որում ամեն բանէ աւելի պէտք ունի գա-
ւառացին:

Կուգե՛ս գաւառացաց բարեւ մ'ընել.
— Կրթի նորա դասակը, լոյս ջառիկն ու-
րա սրտին ու մտայն, և ահա ևս քան
վեա պիտի տեսնուի թէ քու գոյնն նպաս-
տող հրաշքներ գործեր և հարստահա-
րութեան խնդրոյն գործնական լուծմանը
ծառայելու է:

Եթէ չափազանցութիւն թափ ունեց
իմ այս տարիւթիւնն և բուն, և գա-
տարարութիւնն ինչպէս կարելի է հա-
րաւարտութեան խնդրոյն բարձրանը
գործնական միջոց համարել, կը հրաւի-
րեմ վերինը դատարարութեան յօդ-
ուածներս աշարհութեամբ կարդալ:

Պիտիքն վրայ անգամ մ'ալ այսպիսի
խօսելէ ետք՝ կանցնիմ օրակարգիս երկ-
րորդ խնդրոյն, որ է Աղբ. ժողովը վեր-
ջին նիստը:

Նոյն նիստին մէջ ժողովը երկրորդ ա-
տենապետ Կարեան Էֆէնդի երբ խնդ-
րոյն վրայ իր ի դիմանէ կուգէր խօսել,
արդիւնեցաւ իրեն, և այդ արդիւնեցան
իրաւացի էր. բայց երբ թողուց ամբողջ
իր յարգը իմ Երեսօրհան Էֆէնդի, և
իր երեսօրհան խօսելու համար ի բեմ
եղաւ, Ղաթալիոյ խմբակը ճշմարիտ բո-
նարարեց նորա խօսելու տղաութիւնը,
խնդրոյն վրայ Երեսօրհան Էֆէնդի ար-
դէն խօսած լինելը պատճառ ցոյց տալով:

Սակայն այդ պատճառաբանութիւնն
իրաւացի չէր. վասն զի ժողովը ներքին
կանոնադրելու չարգելելու դատարանապե-
տաց խօսելն, եթէ վրանիկն դուրսը բազ-
մած չեն:

Կանոնադրութեան 20-րդ յօդուածը
կըսէ. «Առնապետն» երբ իր անգամ
խօսելու ուզէ, դատարանապետին կը թո-
ղու ամբողջ, ինք ալ իր կարգին խօսք կը
խնդրէ ու բեմը կենէ, և նոյն խնդրին
համար ա՛լ չբարձր պատենապետ:

Իսկ դատարանապետաց համար կա-
նոնադրութեան 4-րդ յօդուածն այսպէս
կը տրամադրէ. «Երեսօրհանապետները գի-
ւանք չեն բազմիր, այլ միայն բազմա-
յութեան ատեն տնտեսապետին փոխա-
նորդելու համար»:

Ինչպէս կերպալ յիշեալ տրամադրու-
թիւններէն, իրենք զիրենք ձախակողմ-
եան կոչող խմբակին անդամոց նոյն ա-
պրէն վարմունքը կատարեալ ծայրայե-
ղութիւն, իրաւանց բռնաբարութիւն և
կանոնադրութեան դէմ պարզապէս զեղ-
ծում մ'էր:

Խօսելու ուզող երեսօրհանին մը խօսքն
եթէ քու չէ խնդրուած արդիւն ուզելը
Սահմանադրութեան ուղեյն հակառակ է:

Երբ երեսօրհանն մը խնդրոյն նկատ-
մամբ իր կարծիքն ինչ որ ալ լինի՝ չկա-
րենայ յայտնել և ճշման ներքե. ի ը-
սութիւնն դատապարտուի, ալ ո՛ր կի-
նէ երեսօրհանութիւնն, և ինչ ուղեւ
կրնայ արտադրել:

Այսպիսի ապրիլն և բռնական վար-
մունքներ ճշմարիտ ձախակողմեանութեան
ուղեյն և սկզբնաւ արատ ու նախապի-
նն է:

Իմ այս կարծիքս լինի կը հաստատե-
նաւ այն վերին պարագան, այսինքն
Փափաղեան Էֆէնդիի այն վարմունքն,
որուն վրայ արդէն գրած եմ նախընթաց
յօդուածովս:

Հասարակաց կարծիքն ինչպէս կըլա-
տէ արդեօք այսպիսի գործերը:

— Ե՛հ, կըսէ, թողէք այդ Աղբ. ժո-
ղովը որ կըրէ յարգեցնելու, զեղծումբա-
շարեւելու, նախապիտի կուտելու, թը-
նամանք տեղադրու և վերջապէս կով-
նէն առաքելը գարծելու է:

Միթէ ա՛յս պէտք էր լինի հասարա-
կաց կարծիքը, բայց ինչ կրնամ ըսել և
մեղադրելու ինչ իրաւունք ունիմ, քանի
որ մէկ կողմէ խմբակն իր ծանուցեալ
արարքներով տեղի կուտայ և միւս կող-
մէ յատաճիլ խմբակն կուտակցութիւնն ալ
չկրնար գոնի իր երեսօրհանաւորան
պարտաւորութիւնը կատարել:

Իրաց վիճակը կարծես ամեն կողմէ
հաստատ ընելու նախանձ մը, մեղմ մը
և բուն ջանք մը կայ, այնպէս որ մարդ
սրբաբաւ աշխատի միջնորդական բան մը
գտնելու, չյաջողելու, կը հայի ու կը մա-
շի. կարծես թէ թշուառութիւնը Հայուն
ձախակողմիկն եղած է:

Ինչ բեմ սա լրագրաց, (մէկ երկու
մասնաւորութիւնն ի բաց տեսող) Հայ

դրականութեան սա պաշտ պողոտաներուն,
որ խեղճեցին Հաստաճ խնդիրներու մէջ
ալ կը մտնեն, իր տղիկ փոքր տեսնել
չկրցող տաղաղակին պէս բարձրերը կը
թռչան, և աղջիկն քաղաքագիտութիւն
ուսնելը կարծած տեսնին իրենց և աղ-
ջիկն զլսուն փորձանք կը բերեն, առանց
նախատեսելու ժամանակը պարագաներն
ու հետեանքը:

Ես թէպէտ քաղաքագիտ չեմ, բայց
չեմ կարծել որ մեր այս վիճակն ու ըն-
թացքը կարենան զաղքը բարձր ապա-
զայի մ'առաջնորդել:

Ն.Ո.Գ.

Պարսկեան ցերեկոյ և գիշերօթիկ
վարժարանի Տնօրէնութիւնը պատիւ ու-
նի ծանուցանել Մեծարող Հասարակու-
թեան որ վարժարանին պարագայ առաք-
մանց վերջը լրանալով աշակերտը պիտի
մտնեն սեպտեմբեր 1 հինգշաբթի և զա-
ստատութիւնը պիտի սկսին սեպտեմբեր
3 երկուշաբթի:

Նոր աշակերտ ապա փոխադրող ծնողք
կը հրաւիրեն տեսնուիլ Տնօրէնութեան
հետ այս օրէն սկսեալ ամեն օր մինչև
ժամ 3, վարժարանին մէջ:

Վարժարանին Տնօրէնութիւնը կ'ա-
պաշտէ զծնողք որ առանցողաց յառաջ-
դիմութեան և հանդուստութեան համար
ամեն խնամք և ջանք ի գործ կը դրուին:

Հիմնադիր-Տնօրէն

Պարսկ. վարժարանի Ռ. Յ. Պէրպէրեան
Դատարար, Կատին Եկեղ.

Փողոց թիւ 3

1877 օգոստոս 22

Ի Լ Ա Ն

Ասաքիլի Շահանէ Լիւին մէջնու-
րէն Տարը Շուրառա մահօր զպուրու-
նան նուսնանէին վէճակէ մուպայեա
օլունաճադ օլուն 30000 գըլէ պերին.
ճի ալա ճինա Սիպիլ եաղը թարիխի
գոնթրաթօտա հէման վարնա իսկէ.
լէսինտէ թէպիւմ օլունաճադ վէ ըսմի
կէօմիլիկի Նիզամիյէ իսպիլնէսինէ ա-
յիտ օլունալ իսկէլէի մէզըբիւրտէ թէս-
լիմ օլունաճադա քատար վուգու
պուրուճադ մասարիֆի իսպիլնէ վէ
սայիրէսի վէ գանթարիյէսի միւթա-
հիտէ այիտ օլունալ վէ մէզըբիւր եաղ
մահալը մէզըբիւրտէ թէպիւմ օլունաճա-
ղընա տայիր մէմուրի թարաֆընտան
կէլէճէք մաղպուղ սէնէտինին իւզէ-
րինէ էսմանընը նըսֆը պէր վէճը
փէշին վէ նըսֆը տիկէրի 31 կիւն մի-
րուրինտէ սիմ մէհիտիյէ 20 զրուշա
վէ մէհիտիյէ վերիլէզէ պօրաս ֆի-
յալթըլըլա պիլ հիսապ ֆարգըլըլա
դէրապէր գայիմէ օլարադ Նիզամիյէ
լազիլնէսինտէն իթա գըլընաճադ շար-
թը վէ շէրայիթի սայիրէսի իլէ պէ-
հէր գըլէսի 41 զրուշ 30 վարայա օ-
լարադ թալիպի էօհաէսինտէ օլունա
աղոսթօր ըումիլին երիմի աղոսթօրն.
ճը վաղար էրթէսի կիւնիւ գարա-
րը գալթիսի վերիլէճէլինտէն, իթա
լիթմէյէ թալիպ օլունալըն էլվիմ մէզ-
ըբիւրտէ Տարի Շուրայի առքըրիլէ կէլ-
մէլէրի:

23 աղոսթօս 1877

Պապը Սէրասքէրի

Ասաքիլի Շահանէ Լիւլիսէ ան-
պարը իլին մուգուտտէմա գուշաքը
էսմաֆընտան գոնթրաթ օլունաճադ
չաղարը էսմաֆը մէզըբիւր վաղթ ու
զէմալի իլէ թէպիւմ իթմէտիլլէրի ճի-
հէլէ կէրէք եէրլի իմալի վէ կէրէք
էֆրէնճ մալի օլարադ 400000 տաէտէ
քատար քուշաք մուպայեա օլունա-
ճաղընտան քուշաք վերմէյէ թալիպ
օլունալը վերէճէլլէրի քուշաքլարըն
նուսնանէլլէրի իլէ պէրպէրտէ աղոսթօ-
սըն օթուգուճուտ սաղը կիւնիւ Տարի
Շուրայի առքըրիլէ կէլմէլէրի:

23 աղոսթօս 1877

Պապը Սէրասքէրի



ԱՅԵՐԻ ՎԻԿՏՐԻՆ

Ով որ իր մազերուն թափելը չուզեր, «Այերի վիկտրին» կոչուած մազի անուշահոտ ջուրէն գործածելու է. ուրիշ ամեն տեսակ մազի ջուրերը կամ իւրերը՝ որ մազ չի թափելու համար կրծախուին, բոլորն ալ անօգուտ են. իսկ վիկտրին օգուտը միշտ անուշահոտ փորձերով անսուտած է, և Պոլսոյ ու զաւառաց մէջ օր օրի գործածողներուն թիւը կաւելնայ: Անոնք որ իրենց մազերուն գեղեցկութիւնը կորսնցնելու վրայ են, շուտով գործածեն աս ջուրէն որ ի վերջոյ չզոյ՛ւն: Թափելու վրայ եղող մազերը կը հաստատէ ու կամպայնդէ, թափածներուն տեղը մազ կը բուսցնէ երբոր մազերուն արմատը փնտռուած չէ, ու ճերմակած մազերը անպատճառ իր նախկին բնական գոյնին կը բերէ, գործածելուն կերպը շիջերուն հետէն է. կը ծախուի կ. Պոլսոյ Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մազազան:

ՕՃԱՌ. Մնուշահոտ օճառ, մորթը կը կակուղցնէ ու լեղի ջուրով ալ կը փրկուի, տեսակը խիստ ազնիւ ու գինը շատ ամեն է. կը ծախուի կ. Պոլսոյ Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մազազան:



ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱՂԱՍԱՆԻ
Կ. Պոլսոյ Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մազազան կը ծախուի, ազնիւ ճերմակ կտաներ, ու սեղանի ծածկոյ և այլն, սեղանի արծաթած պատառաքաղ, դրդալ և այլն. կաղի լամբաներ, սեղանի ճերմակ յախճապակի սպասք Անգլիոյ տեսակէն, քարեօյաներ, փէրէ ծածկոյ, քիւնէ սալան և այլն, խոհանոցի վերաբերեալ անօթներ, կարի գործիքներ, և ուրիշ անթիւ պիտանի վաճառք կը ծախուին չափաւոր գներով:



ՇԻՐՔԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ
ՇՈՊԵՆԱԿԵՐՈՒՆ ԵՐԹԵԿԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1877 ՕԴՈՍՏՈՍ 1 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ
ՄԻՆՁԵԻ ՕԴՈՍՏՈՍ 131

ՈՒՐԲԱԹ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԲԱՆՈՂ ՇՈՊԵՆԱԿԵՐԸ

Table with 2 columns: Ժամ (Date) and Բանալիքներ (Items). It lists various goods and their prices for the 1st of May 1877.

Table with 2 columns: Ժամ (Date) and Բանալիքներ (Items). It lists various goods and their prices for the 2nd of May 1877.

ԻՍՍԿԻՆՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈՊԵՆԱԿԵՐԸ

Table with 4 columns: Ժամ (Date), Բանալիքներ (Items), Կառուցել (Built), and Կառուցող (Builder). It lists construction-related items and their details.

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Table with 4 columns: Ժամ (Date), Բանալիքներ (Items), Կառուցել (Built), and Կառուցող (Builder). It lists construction-related items and their details.

QUINA LA ROCHE advertisement featuring a circular logo with 'PRIX 16,600 fr.' and text in Armenian describing the product and its benefits.

NORTH BRITISH AND MERCANTILE INSURANCE COMPANY advertisement with detailed text in Armenian and English, including company information and insurance details.

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ. Ս. ԻՆՏԵՐՆԱԿԱՆ